

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԳԻԱ

Պինդ լեռան բնակիչ մահմեդական ազգաբնակիչները մի պատգամաւորութիւն ուղարկեց սուլթանին, որ պէտք է ինչպէս թողնել նրանց թէսաւիտայի դաշտերի արտատեղիները: Այդ լեռնաբնակիչների մեծամասնութիւնը անասնապահութեամբ է պարսպում և բնակվում է Պինդ լեռան բարձրութիւնների վրա մեծ գիւղերի մէջ: Խսկապէս նրանք իրանց գիւղերի մէջ մնում են միայն ամառը, իսկ ձմեռը իջնում են թէսաւիտայի դաշտերը և մնում են այնտեղ մինչև մայիս: Սահմանական նոր գիծը Յունաստանի և Թուրքիայի մէջ որոշուեց յետոյ այդ լեռնաբնակիչների մեծամասնութիւնը մնաց Թուրքիային, մինչև թէսաւիտայի դաշտերը անցան Յունաստանի ձեռքը: Թէպէտ յոյն-թուրքական դաշտազրկը իրաւունք է տալիս լեռնաբնակիչներին հետեւել իրանց սովորութեանը, բայց այդ յոգուածը բաւականացուցիչ չէ համարվում:

Նոր երկիրներին տիրապետելուց առաջ յունական թագաւորը մի շրջաբերականով այդ բանը կը յայտնէ էպիրոսի և թէսաւիտայի բնակիչներին:

Պետութիւնների միաձայն գրութեանը Հասիմփաշա պատասխանեց, որ Յունաստանին զիջած երկիրները յանձնելու և նոր գիծ անցկացնելու հսկողութիւնը յանձնված է Գերվիշփաշային, որ մի քանի թուրք օֆիցեր օգնականներ ունի: Թագամամթերքները դուրս կը տանվին Արտաշից և քաղաքը կը յանձնվի եւրոպական մասնագործին:

Թուրքաց զօրքերը արդէն դատարկել են Արտա, տանելով իրանց հետ բոլոր սաղմամթերքները: Քաղաքի մէջ միացել են մի քանի ժանդարմներ կարգապահութեան վրա հսկելու համար: Յունական զօրքերը կենտրոնանում են սահմանների մօտ: Ազգաբնակիչները երկիրը մէջ է: Մահմեդական

րած սովի և տարաբնուի հիւանդութիւնների Ներկայ 1881-ին Յէլայ գերեզմանը, Ներքովթ լեռը շարժվում է. վրէժնդիր սրանից 4000 տարի առաջ կատարված յաղթութեան, այդ հրաբուխը հիմնադրուած է առնում գեղեր, սպանում է մի մասին, վիրաւորում, որբացնում և այրիացնում է միւսին, թողնելով նրանց անտուն, անընտանիք և կարօտ օրվայ հացին:

Ռուսաստանի ազգայինք իրանց կարող ձեռքը իր ժամանակին օգնութեան հասցնելով սովի դէմ, ազատեցին իրանց համարին եղբարց մի անխուսափելի մահից:

Յոյս կայ որ, մի և նոյն ազգայինք, նոյն օգնական և պահպան ձեռները կրկին կը մեկնեն վանայ արևմտեան գաւառների երկրաշարժից վնասված վիրաւորվածներին, այրիացածներին և որբերին:

Ա. Թոխմախեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Խառաւ-Խրտ 17 յունիսի

Նամակիս մէջ ծրարած զրկում եմ տանս և ութը բուբլի փող, որ խնդրում եմ զրկել Կ. Պօլսոյ հայոց «Միացեալ ընկերութեանց» օգտին, որը ժողովիկ է այստեղ այդ նպատակաւ, իսկ նուիրատուաց անունները գետեղել «Մշակի» մի անկիւնում ի միամտութիւն նրանց: Մագառեանց 2 ր., Գրիգորեանց 3 ր., տիկին Լիւսիցեանց 2 ր., Գեղամեանց 3 ր., Սուրբհանց 2 ր., Շերաֆիմովիչ 3 ր., Լիւսիցեանց 2 ր., Սահակեանց 1 ր., Ընդամենը 18 բուբլի, փօստի ծախսը իմ հաշիւից:

Գէորգ Սուլայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը, կիրակի օր, յունիսի 28-ին Արծրունութատրոնում լինելու է վրաց ներկայացում յօգուտ թատրոնի գանձապահ պ. Փիրաբեանցի: Կը խաղան Մօլիէրի «Սէրը բժիշկ» և մի վոզզիւլ կը լինի զվէրտիւրմենտ և տիկին Գաբունիա կերպի «Ծիծեռնակ» հայերէն լեզուով:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Լրիցեանի ուսուցիչն քրօշուրը «Թուրքաց Հայաստանի վիճակագրական փորձ» վերնագրով: Այդ բրօշուրի վրա կը խօսենք:

այստեղ: Պետերբուրգի հայ հարուստների այս տեսակ խառնուրդի և սապօնի փամփոշուները դուրս թողնելը նոր բան չէ: Թողնելը հին ու ժանգոտած անցեալը, մտաբերելը այն, ինչ որ, շատ ժամանակ չէ, բերանից բերան էր անցնում, — քրտեղ, Հայաստանի օր քաղաքում հիմնական ցաւն այն գրատուներ, որի սկզբնապատճառը պիտի լինէր մեր հարուստներից մէկը, կամ քրտեղ մնաց աւելի եւ մեծ հիմնարկութիւնը՝ Հայաստանում ձեռնարան կամ համալսարան բաց անելու: Եւսում էք, որպիսի ազգողական ու հանդիսաւոր ձայներ են— գրատուները ու համալսարանները... Եւ կային մեր մէջ այնպիսի թիւթեամբներ, որք հաւատ էին ընծայում այն լուրերին և երկնային մասնաճան հարուստի ձեռնարկին էին սպասում: Կրկնում ենք կային այսպիսի թիւթեամբներ, կը գտնվին և այժմ... Մի քանի հարիւր հազար ունեցած բուբլիով այս տեսակ խաղ բռնելը իր ազգակիցների հետ ազնուութիւն և վեհութիւն չէ, որովհետեւ այս տեսակ արարմունքները աւերիչ ներգործութիւն պիտի ունենան սմբոսի վրա, ներհիւսելով նրան անգործունէութեան արտերը, սովորեցնելով անկել իր յոյսերը սրա նրա զրկանքին: Թողեք գոնեա հատարակութիւնը ըմբռնի ինքնագործունէութեան գաղափարը և ոչ հաւատայ ձեր կախարդական գաւազանի հրաշքներին: Գործով դուրս եկէք ապարեզ և ոչ պրօսկուներով, որք ձեզ սաղ չեն գալի: Եւ եթէ «Մշակը» տեղ է տալիս այս տեսակ լուրերին իր էջերում, սրանք կարող են միայն վիճակագրական թուանշանների զեր խաղալ ձեր սպակամացուցիչ գործունէութեան պատմութեանը համար...
Գաս. Եղադրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 25 յունիսի

«Մշակի» վերջին համարներում տպված Վանայ թղթակիցների նամակներ հաստատում են եւրօպական լրագիրների հրատարակած լուրերի կրկնաւորումը:

Այդ ցուցակի դուժ ընթերցողները պիտի նկատեն, որ այդ անբաղդ աշխարհի զօրքերը կրկններ կարծ ժամանակամիջոցում հետզհետէ ենթարկվեցան իրար անմիջապէս յաջորդող երեք աստիճանի հարուստների, այսինքն 1876-ից 1877, 1878 պատերազմի, այնուհետև հրկիւնների, սպանութիւնների, աւարառութիւնների և հազար մի տեսակ աւերմունքների, 1879-ից 1880 համատարական զօրութեամբ Աղանայ կը խրկեն: Անհատական եկած նամակներ կըսեն թէ խիստ բանտարկութեան ենթարկուած են, պատրիարքաբարան եկած նամակներն բանտարկուելու վրայ բան մը չեն ըսեր: Իսկ մեր թերթերը կը լռեն: Ապրելու ամենին աղէկ միջոցն ալ լուրսութիւնն է:

Կը լռեն նաև այն խնդիրներու մէջ, յորում պէտք էր ամենին առաջ ձայն բարձրացնէին, թեզուտի երկրաշարժը ամենուն վրա կը պատճառէ, բայց ոչ մի թերթ հրաւեր չը կարգար ժողովուրդին փութալ յօգնութիւն, ոչ մի թերթի գրասենեակ հանգամանակութեան համար ստորագրութիւն կը բացուի. բազմաթիւ թեզուտներ կ. Պօլսոյ կը գտնուին. պիտի դառնան, բայց գրպաններն ստակ մը չը կայ: Անցեալ օր պ. Նիկողոսեան մեր թերթերուն այս ժամին ցոյց տուած անտարբերութեան վրայ ապշած հայ խմբագրի մը կը գրէր թէ այսպիսի սառնութիւն մը երբէք Տփղիսի խմբագրութիւնը ցոյց չը տար: Նոյնպէս Պատրիարքին ալ կը գրէր, անկէ եկած պատասխանը գոհացուցիչ է բաւական: Սրբազանը յաջողած է այլ և այլ միջոցներով թէ մը գուածն հանգամանակ և բաւական թէզուտցիները ձարթն հանել: Մեր թերթերն այսօր կարեւորագոյն խնդիր ունին, ապրելու խնդիր — Ման գոււմէ իր գիւնը կիսուակէս կիջնցնէ, 20 փարայ կընէ (4¹/₂ կօպէկ) և ազգային հիւանդանոցի կը յատկացնէ խոտանալով շատցնել ինքն ընթերցողաց (կամ թէ գոհաց) թիւը շատնայ: Մասին կը նայի որ չըլար, շուտ այն ալ գիւնը կիջնցնէ և կըլար 20 փարայ և նոյն բանին կը յատկացնէ. Հայր Ենիք ետև չը մնար, այն ալ 10 փարայ կընէ (2¹/₂ կօպէկ) — իսկ թէ էր ճէմանը է ֆլքեաբ կը մնայ անսասան: Եւսինք ժամանցողները պիտի յաջողին. հիմակուց թուղթը այնչափ գէշ են ըրած, որ

կան թատրոնական խմբի ղեկավարների կողմից անպատուած ճանապարհ դնելով, մենք հեռաւոր երկիրներ ճանապարհ կը դնենք և կաքորները մեր թատրոնն էլ, որ արդէն կարծես չէ կամենում ծառայել իրան յատուկ բարձր նպատակներին, այլ բոլորովին անձնական մասնիկ կը քերտի ին և շահերին:

Թող մտածողը հասկանայ իմ ասածը և չարգարանայ ասելով, թէ ուրիշները արդէն գործում են, ինչ չեն տալիս ապարեզ: Պէտք է քաջութեամբ դուրս գալ սպարեզից, յաղթութեամբ ճանապարհ բանալ և բռնել այժմեան գործիչների տեղը ամենայն փտահաւանութեամբ և բարեխղճութեամբ:

Թատրոնասէր

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՆ

Յունիսի 19-ին

Թէ ճշմարիտ է այն լուրը, որ մի հարուստ ազգասէր մտադիր է Պետերբուրգում հիմնելու մի ընկերութիւն «Հայաստան» անունով, մենք կը հաւատանք, բայց թէ կիրագործվի այդ միտքը և այս աղբիւրից, — մենք փոքր ինչ կասկածում ենք... Պարզ խօսենք. մենք կարծում ենք, (սայ Աստուած որ սխալված լինէինք) որ սա լոկ ցանկութիւն է, որ անցել է հարուստ ազգասէրի մշտեցից, ընկնելով «Մշակի» արած մի շարք սուաշարկութիւնների ազդեցութեանց տակ: Սա այն ցանկութիւններից պիտի լինի, որ մէկ էրկի լուսնի խորհրդաւոր մի գիշերվայ պահուն քարվան կտրելու փափագը յայտնեց իր կնոջը...

Բայց նախ քան շարունակենք մեր այս երկուտողը, հարկաւոր ենք համարում յայտնել ընթերցողին, որ մենք բոլորովին այսպիսի մի ընկերութեան թշնամին չենք. — ընդհակառակն՝ նրա բարեկամը և ի խորին սրտէ համակողմը: Եւ եթէ այս ընկերութեան հիմնելը մի փաստ է և ոչ օգային ամբողջ, մենք ներգութիւն ինչորեւից հիմնարկող ազգասէր հաւատաց մեր այս նկատողութեանց վերաբերմամբ, պատիւ կը համարենք մեզ նպատաստանող լինել այս ընկերութեանը որպէս դրամօք, նոյնպէս և նրաթեղէնօք:

Այսու ամենայնիւ, կասկածանք յայտնելու պատճառներ ունենք և պարտաւոր ենք համարում մեզ յետ չը ձգել և նոյն իսկ յայտնել

իսկ երբ կը տեսնեն որ զարեւու. հետ բարբերն ալ կը փոխուին, որ Թուրքիոյ հայեր համաբաշխութիւն մը կը սկսին ունենալ մէջերին, և կանուխ կամ ուշ չը պիտի թողուն որ իրենց եղբայրներն իր կաթնտու հորթեր կթուին անխնայ այդ վայրենիներէն, այն ժամանակն է հաւ որ իրենց կեանագործութիւններն շափաւորել կուզեն: Թուրքաց պէս վատերը միայն երկիրը առջև տեղի կուտան. և մեր իմաստունները, որ կը քարոզեն սուս ըլլանք, խելօք կենանք, սաճկին հետ ինչալ կըլլայ միեւն չեն ըսեր մեզ թէ մինչև հիմա խելօք կենալէն ինչ չանցանք, և ո՞վ կըրցաւ Թուրքիոյ մէջ առանց երկիրը ազդելու հանգամանակները: Հայաստանին ցվիլիկիա երկիրը մը կը տիրէ թրքաց վրա: Անցեալները իմացուցինք թէ Հաճընի մէջ փոքր ինչ չիփթութիւններ տեղի ունեցեր են. վերջի առած մեր տեղեկութեանց նայելով դէպքը հետեւալն է: Կառավարութիւնը կուզէ հայ ժողովուրդէն բռնի 52000 դր. սուրբ մը առնուլ, աւարկելով թէ այդ տուրքը ժողովուրդին մէկ պարսպն է 20 տարի առաջ. իսկ ժողովուրդը կը պնդէ և կը հաստատէ թէ ինքն այդ գումարներն ժամանակաւ խաղան օգուտին վճարած է և թէ հիմայ ո և է պարտք չունի: Գիմարտութիւնը կը շատնայ, տեղական թիւրք իշխանութիւնը, հայու մը աջակցութեամբ, կը յայտարարէ թէ ժողովուրդին միտքը Հաճըն ալ Զէյթուն մը դարձնելն է, թէ այդ տուրքը չը վճարեն պատասխանութիւն կը նշանակէ, ուստի կը ձերբակալէ պարագլուխներն, որոնք հայոց շահերն կը սպառնան: Այդ պարագլուխներն Շիրումեան, ատենապետ քաղաքական ժողովոյ, ձիւրեան ատենապետ քաղաքական ժողովոյ և Բէճէպեան, ատենապետ բողոքական հայոց ժողովոյ, և գաստնք գլխուս-

Հայրենի լիք սկսած է Ազգ. վարչութեան վրայ քննադատութիւններ հրատարակել, իսկ երեսփոխանական ժողովը երբ քննադատութեանց առարկայ պիտի ըլլայ: Ամսոյս 11-ին երեսփոխանական ժողովը ներկայ շրջանին Գ. Նիսաբ ըրաւ. բաւական նոր երեսփոխաններ ընտրուած էին. ժողովին ընդհանուր կերպարանքը գոհացուցիչ էր. վերջի ընտրութիւններն հայ էֆէնդիները հեռու պահած են, հազիւ մէկ երկու փոքրիկներ կրցած են սարկել, բայց անուշտ պիտի նային որ անոնք ալ կրաւորական զրքէ գոհու չըլլեն: Կառավարութեան և ազգին յանրը համայնեցնելու միջոց մը դեռ չէ գտնուած, ինչ որ միայն օգտակար է. միւսին վնասակար կը սեպուի, և այս ալ Կրան համոզմամբ է: Արդ անոնք որ հայ մը ազգային խնդրոց մէջ ազգին շանուց համաձայն գործելու ատեն տեսնէ որ իր կառավարութեան հակառակ կը շարժի, հետեւաբար իր անձին վնասակար, բնական է որ ազգին և իր անձին չանը սկսի բաղադրել: Ազգին գործոց մէջ գտնուողները պէտք չէ որ այսպիսի փորձութեան մը ենթակայ ըլլան: Ազգ. ժողովը տարուան մէջ գրեթէ 20—25 նիստ հազել կրնէ, որոց մեծ մասը ատենական գործողութեամբ կանցնէ, իսկ ազգին կենսական իւրեղանքը վրայ մտածելու ժամանակ չը մնար, և 21 րոց վրայ մտածելու ժամանակ չը մնար, այնպիսի տարի է դեռ կարող չեղաւ ժողովը այնպիսի ընթացքի մը մէջ մտնել, որ քիչ ժամանակ մէջ կարենայ շատ գործ տեսնել: Երկու նիստ կը տեսնենք որ այնպիսի խնդրով մը ժամանակ կանցնէ որ արդէն լուծուած պիտի ըլլար. որոնք պիտի մասնակցին ընտրութեան, օգուտ այս չէ որոշուած, և ինչպէս նախորդով ըսինք, երեսփոխարէ մը, պ. Մանալեան կը բողոքէր իրեն իրաւունքները բռնաբարուած են ըսելով: Ատենանկու է ինչ վիճարանութիւններ, ինչ վի-